Արծրուն Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՓՈՒԼԸ

Բանալի բառեր - ՀՀ Զու, նախարարություն, բանակ, ստորաբաժանում, հարձակում, բարեփոխումներ, պաշտպանություն, զրահատեխնիկա:

Նախաբան

Հայոց բանակը, որ հազարամյակների պատմություն ունի, այսօր իր նոր տեսքով 22 տարեկան է: ՀՀ զինված ուժերի ստեղծման և կայացման ճանապարհը բարդ ու խորհրդանշական է: Դեռ 1988 թ. փետրվարի 22-ին, երբ Երևանում իրականացվեցին օրինական ցույցեր, 8-10.000-անոց ադրբեջանական ամբոխն Աղդամից հարձակվեց Ասկերանի վրա, մտավ քաղաք, որոշ ավերածություններ արեց, սակայն ետ շպրտվեց[1]: Փետրվարի 27-ին սկսվեցին Սումգայիթի հայկական ջարդերը: Մարտի 10-17-ին Բաքվում, Կիրովաբադում և հայաշատ մյուս վայրերում ադրբեջանական խուժանը հայերի հանդեպ դիմեց զանգվածային բռնարարքների: Սեպտեմբերին Շուշիից հեռացան վերջին հայերը[2]: Նոյեմբերի 21-ին սկսվեց Կիրովաբադի՝ պատմական Գանձակի, և Ադրբեջանի հայաշատ վայրերի ինքնապաշտպանությունն ու տեղահանությունը, որն ուղեկցվեց երեխաների, ծերերի ու հաշմանդամների սպանություններով[3]: Ադրբեջանցիների զինված ոտնձգություններն ու սադրանքները հաճախացան Հայաստանի սահմանամերձ ու նաև խառը բնակչություն ունեցող շրջաններում:

1990 թ. հունվարի 14-ին Արարատի շրջանի Քյարքի գյուղի տարածքում հայկական աշխարհազորային ջոկատները այս պատերազմում առաջին անգամ բախվեցին թուրքերի հետ[4]: Երկօրյա մարտերից հետո հունվարի 15-ին ազատագրեցին Երևան-Մեղրի ռազմավարական նշանակության ավտոճանապարհը վերահսկող Քյարքի գյուղը, որը ադրբեջանցիների կողմից մարտական հենակետի էր վերածվել: Երեք օր անց սկսվեցին Երասխավանի կռիվները: Մայրաքաղաքից ընդամենը 40 կմ հեռու զինված ընդհարում էր, որը սպառնում էր հանրապետությունից մեկուսացնել նրա ամբողջ հարավային հատվածը: Երասխավանի կռիվներն ավարտվեցին հունվարի 21-ին՝ հակառակորդի լիակատար պարտությամբ, սակայն ցավալի կորուստ ունեցանք. զոհվեց Հայաստանի ազգային հերոս Մովսես Գորգիսյանը[5]: Ահա այսպես

---

[1] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, Հանրագիտարան, Ֆ. Տ. Սարգսյան և այլոք, Երևան, 2004, էջ 75:

[2] Տե՛ս Դևրիկյան Տ., Սկիզբը. Սահմանադրական պայքարից մինչև կամավորական շարժում, http://www.hayzinvor.am/10111.html

[3] Տե՛սՂարաբաղյան ազատագրական պատերազմ., էջ 42:

[4] Աբրահամյան Հ. Բ. Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, № 3, էջ 117-129:

[5] Տե՛ս Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 39:

սկսվեց թուրք-հայկական նոր պատերազմը, որը այսօր ընդունված է համարել Արցախյան հակամարտություն: Հասկանալի է, որ այս պայմաններում հարկավոր էր ստեղծել սեփական բանակ, որը հեշտ չէր: Արդեն կային շուրջ 80 կամավորական ջոկատներ, որոնք 1991-1992 թթ. արդեն իրենց հիմնական անելիքը գիտեին և հասարակության մեծ մասի մոտ ասոցացվում էին սեփական բանակի հետ[1]:

Կազմավորումից մինչև պատերազմի ավարտը

1991 թ. հունվարի 30-ին ՀՀ Նախարարների խորհուրդն ընդունեց որոշում՝ **«ՀՀ նախարարների խորհրդին առընթեր զինվորական գերատեսչությունների աշխատանքի կոորդինացման կոմիտե ստեղծելու մասին»**[2]: Նորաստեղծ կոմիտեն համակարգելու էր հանրապետության քաղպաշտպանության շտաբի, զինկոմիսարիատի, բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) ռազմական ամբիոնների ու ԴՕՍԱԱՖ-ի աշխատանքները: Դրանք հենց այն կառույցներն էին, որոնք այդ պահին լրացնում էին բանակի բացը: Կոմիտեի նախագահ նշանակվեց Վազգեն Սարգսյանը: Ըստ էության սա պաշտպանության նախարարության նախահիմքն էր, որը սկսում էր համակարգման ծանր ու դժվարին գործը: Հայոց պատմությանը հայտնի է, թե պատերազմի ժամանակ ինչ դժվարությամբ է ստեղծվել հայոց կանոնավոր բանակը:

1992 թ. հունվարի 28-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց ՀՀ Պաշտպանության նախարարություն: Որպես օրգանական շարունակություն, 1992 թ. փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կազմավորման մասին[3]: Ձևավորվեց կենտրոնական հրամանատարություն, որին ենթարկվեցին ինքնապաշտպանության ուժերի բոլոր ստորաբաժանումներն ու ջոկատները: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստեղծումը հայոց բանակաշինության գործընթացի կարևորագույն փուլերից էր[4]: 1992 թ. մարտական գործողությունները ցույց տվեցին, որ հակառակորդը Շուշիի և Լաչինի պարտություններից հետո պատերազմը սաստկացնում է և փորձում կանոնները ինքը թելադրել, որպեսզի հայկական կողմը միշտ մնա պաշտպանվողի դերում: Հայկական ինքնապաշտպանական ուժերը դա լավ գիտակցում էին և 1993 թ. առաջին իսկ օրվանից կատարեցին հակառակը, նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը՝ հակառակորդին մշտապես պահում էին լարվածության մեջ:

1993 թ. պատերազմաշրջանը կարևոր տեղ է զբաղեցնում հայոց պատմության մեջ, մասնավորապես աչքի ընկավ հարթավայրային մարտերով: 1993 թ. հայկական զինված ուժերը ռազմական փայլուն գործողություններով ազատագրեցին Քարվաճառը, Մարտակերտը, Աղդամը, Կովսականը, Ջրակնը և այլն: Հայկական ուժերը, որ միասին վերցրած կազմում էին ոչ ավելի քան 3000 հոգի, առավելագույնը 50 միավոր

---

[1] Տե՛ս Սարգսյան Ս., Հայկական բանակ-10, Երևան, 2002, էջ 12:
[2] Տե՛ս Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 40-49:
[3] ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ.մ.1, կ.1, թ.45-46:
[4] Տե՛ս Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը 1991-1994, էջ 51-53:

զրահատեխնիկայով[1] և մոտ 100-150 միավոր հրետանային միջոցներով,[2] շեշտակի հարվածներ էին հասցնում ու խուսանավում՝ հակառակորդին չթողնելով ուշքի գալ:

Պատմությանը հայտնի են բազում դեպքեր, երբ մեկ ճիշտ վերախմբավորումն ու զորաշարժը ապահովել են հաղթանակը անգամ գերազանցող ուժերի նկատմամբ. Գավգամելլա, Կանն, Աուստերլից և այլն: Կան նաև հակառակ օրինակներ՝ օրինակ, 1941 թ. հունիս-սեպտեմբեր ամիսների շեշտակի հաջողություններից հետո Հիտլերի սխալ զորաշարժերի հետևանքով տանկային խմբավորումները հայտնվեցին ոչ ճիշտ տեղերում, և հետևանքը եղավ Մոսկվայի տանուլ տված ճակատամարտը[3]:

Հայկական ուժերը անգամ հուլիսի 21-ին, երբ արդեն քաղաքին հասցվել էր համապատասխան ճշգրտությամբ հրետանային հզոր հարված, զգուշորեն քաղաք մտան՝ չտարվելով փողոցային ծանր մարտերով[4]: Նույն կերպ իրականացվեցին ազատագրական միյուս գործողությունները: Եթե 1993 թ. Ընդհանուր ռազմաշրջանը նախորդ տարիների մարտական գործողություններից տարբերվում էր նախ և առաջ զրահախմբերի մարտավարական ճիշտ կիրառմամբ, հայկական ուժերը միջոցների սակավության պատճառով ստեղծելով խառը զրահախմբեր՝ լուծել էին զորքերի խուսավարման խնդիրը: Սակայն իրավիճակը լիարժեք պատկերացնելու համար նշենք, որ այդ զրահախմբերը տարբեր զրահատեխնիկայի միավորների միացություն էին՝ տանկեր, հետևակի մարտական տարբեր մեքենաներ, զրահափոխադրիչներ, հրետանային ինքնագնաց միջոցներ: Նման խմբերի կիրառման բարդությունը այն է, որ միջոցները, ունենալով տարբեր տեխնիկական հնարավորություններ, հրամանատարների համար ստեղծում էին բազում խնդիրներ: Հրամանատարները չէին կարող միանման որոշակի խնդիրներ դնել բոլորի առջև, քանի որ որևէ մեկը չէր կարող մյուսի առջև դրված խնդիրը լուծել: Ահա այստեղ է, որ հրամանատարի տաղանդին և փորձին լրացնելու են գալիս ենթակա անձնակազմի հնարամտությունը, փորձը, ոգին և այլ մարտական կարևորագույն հատկանիշներ, առանց որոնց այդ ինքնադրսևորումը ավելի շուտ կկործաներ գործի հաջողությունը, քան կարող էր որևէ կերպ դրական ներգործություն ունենալ: Հայկական ուժերը, փաստորեն, ոչ միայն ոչ ավանդական լուծում էին տվել, այլև այդ լուծումը շատ լավ օգտագործում էին՝ հակառակորդի համար ավելի դժվար դարձնելով իրենց դեմ պայքարը: Խառը զրահախմբերը արագաշարժ էին, հասցնում էին խորտակիչ հարվածներ և արագ խուսանավում: Նրանք հիմնականում ճակատային հարվածներ չէին հասցնում, գերադասում էին թևանցումները. հակառակորդի թույլ տեղերի շոշափումով նրան շրջապատում էին, ինչը թույլ էր տալիս խուսափել նաև մեծ զոհերից: Հայկական զորքերի մարտավարության մշտական լուծումներից էր վճռական գրոհներից առաջ ոչ մեծ խմբերով գերիշխող բարձունքների գրավումը. հակառակորդին արագ և շեշտակի հարվածներով ճնշելով՝ թողնում էին նահանջի ճանապարհ միայն, որից հետո դիմում օղակի սեղմմանը:

---

[1] Տվյալները վերցված են ՀՀ ՊՆ Սեյրան Օհանյանի, գեներալներ Ս.Կարապետյանի, Մ.Հակոբյանի և այլոց հետ իրականացրած հարցազրույցներից, ինչպես նաև ՊՆ և ՊԲ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության ընդհանուր համադրությունների արդյունքներից:

[2] Պետք է հատուկ նշել, որ այդ ժամանակ հրետանային միջոցների նման քանակը ապահովվել էր նաև կենտրոնական ենթակայության հիմնական միջոցների՝ առաջնագծին մոտեցմամբ, ինչը բավականին համարձակ քայլ էր:

[3] Այս գործողությունները մանրամասներն ու համեմատությունները տե՛ս Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը: Երևան, 2013, էջ 210-234:

Սակայն միշտ եղել է լուծումների անսպասելի տարբերակ, անակնկալ[1]: Դեպքերը զարգանում էին շատ արագ, հայկական կողմը իրավիճակին լիովին տիրապետում էր լավ հետախուզության շնորհիվ և հասցնում ճիշտ արձագանքել: Լավ տեղեկությունները թույլ էին տալիս գործել ավելի ճիշտ: Նման դեպքերում կա հրամանատարի ճիշտ կռահելու գործոնը, տաղանդը, որով նա հասկանում է հակառակորդի գործողությունների տրամանաբանությունը: Նա ճիշտ է որոշում հակառակորդի հիմնական հարվածի ուղղությունը, գործողությունների տրամաբանությունը և այլն: Սա նշանակում է հակառակորդից մեկ-երկու քայլ առաջ լինել, և ըստ էության կառավարել հակառակորդի գործողությունները, որն էլ ռազմարվեստում կոչվում է էֆեկտների տեսություն[2]: Արևմուտքում այս ամենը քննարկվում էր տեսական մակարդակում շատ վաղուց, սակայն կիրառել հնարավոր է համարվում միայն տեղեկատվական դարաշրջանի և ցանցակենտրոն պատերազմների իրագործման դեպքում: Վերջինիս համաձայն արդեն հնարավոր է կառավարել հակառակորդի մտադրությունները՝ ստիպելով նրան նախապես կայացնել իր համար կործանարար որոշումներ[3]: Հայկական ռազմական միտքը այս ամենի որոշ տարրեր կատարում էր առանց համապատասխան միջոցների տիրապետման: Զրահախմբերի և այլ ստորաբաժանումների ընդհանուր գործողությունների հաջողությունը ապահովվում էր օպերատիվ մակարդակում կայացրած ճիշտ լուծումներով: Մասնավորապես խոսքը, այսպես կոչված, պաշտպանական շրջանների (ՊՇ) ստեղծման մասին է: Ռազմարվեստի ուսուցիչներին հիմնականում անհայտ զորամիավորման այս անունը մի բացառիկ բան էր: ՊՇ-ներն իրենց ուժերով և միջոցներով գտնվում էին դասական գնդերի և բրիգադների մեջտեղում: Դրանք ավելի մեծ էին, քան գնդերը և ավելի փոքր, քան խորհրդային դիվիզիաները, ավելի մոտ էին բրիգադներին: Իրենց կազմում ունենալով մոտավորապես 5-6 գումարտակ և օժանդակ ստորաբաժանումներ, մասնավորապես հրետանի և զրահախումբ՝ դրանք առավելագույնս ինքնուրույն և կենսունակ էին, քանի որ նաև վարչատարածքային հարցերում էին ինքնուրույն և ինքնաբավ: Լինելով ինքնուրույն բռունցք, ենթարկվում էին ուղիղ գլխավոր հրամանատարությանը (թատերաբեմի հրամանատարությանը՝ իմա Արցախյան ինքնապաշտպանական ուժերի հրամանատարին): Լինելով ինքնուրույն միավոր՝ ենթարկված չէին միջանկյալ այլ օղակի: Պարզ ասած՝ լինելով գունդ-բրիգադ օղակի զորամիավորում, իրենց գլխին չունեին մեկ այլ, օրինակ, դիվիզիա, կորպուս, կամ գլխավոր հրամանատարություն: Այս հանճարեղ օպերատիվ-մարտավարական լուծումը, որ գտել էին հայ զինվորականները մարտի պայմաններում, հետագայում պիտի ամրագրվեր աշխարհի ուժեղագույնների կողմից՝ որպես օրինաչափություն: 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբներին

[1] Անակնկալ և ոչ ստանդարտ լուծումները, որոնք առանձնազրույցների ժամանակ ներկայացնում են ՊՇ-ների հրամանատարները և առանձին ջոկատների հրամանատարները զարմանալի են: Դեպքերից մեկի ժամանակ հակառակորդը տեղակայվել էր գյուղը շրջապատող երկու բարձունքներում և ոչ մի կերպ գյուղին մոտենալ չէր լինում, գրոհները հիմնականում ուղղված էին բարձունքների ուղղությամբ, որը իրենք լավ էին պահում: Մեր զորքերը հասկանալով, որ հակառակորդը կրկին սպասում է բարձունքների գրոհի, դիմել էր խորամանկության՝ շեշտակի մտել գյուղ ու միանգամից շրջանցելով թիկունքից՝ խփել բարձունքի պաշտպաններին: Այսինքն՝ կենտրոնից գրոհել, սակայն գյուղից արագ անցնել թիկունքային հարվածի:

[2] Deptula. David A. Effects-Based Operations: Change in the Nature of Warfare. Arlington VA: Aerospace Education Foundation, Defense and Airpower Series. 2001, p. 8-9.

[3] С.Л. Печуров. Англо-саксонская модель управления в военной сфере. М., 2005, стр. 200-232.

ամերիկյան և արևմտյան այլ բանակներում լայնորեն սկսվեց մեքենայացված-մոբիլիզացված-արագաշարժ բրիգադների ներդրումը[1]: Իհարկե, դժվար է ասել, թե ամերիկյան բանակում ուսումնասիրել են Արցախյան պատերազմի փորձը, սակայն ենթադրել, որ իրենք ևս փորձով եկան այդ եզրակացությանը, կարելի է: Դրանք, ըստ էության, արդեն իրենց բազմակի արդարացրած ՊԾ-ների մոդելներն էին, որոնք ուղղակի շարժունակության և ծանր զինատեսակների ավելի մեծ հնարավորություններ ունեին՝ գումարած օդուժի հնարավորություններ և այլն: Դրանք մեր ՊԾ-ների նման ուժեղացված բրիգադներ էին, որոնց վերադասությունից հանվել էին դիվիզիան և կորպուսը: Դա նրանց հաջողվել էր նախ կրակային և շարժունակության հզորացման հաշվին, սակայն ամենամեծ հարցը կառավարելիության աստիճանի բարձրացումն էր, որը լուծվել էր ցանցակենտրոնության շնորհիվ՝ տիեզերական կառավարում, ԱԹՍ-ներ և այլն, իսկ մեզանում՝ փորձի ու հմտության շնորհիվ: Նույն փորձը ռուսական բանակն անցավ 2008 թ. պատերազմի ժամանակ և այդ դեպքում ևս խնդիր դրվեց դասական գնդերից անցնել բրիգադների և վերացնել նույն միջանկյալ դիվիզիա-կորպուս օղակը: Այսինքն՝ ռուսական բանակը այդ ամենը ևս իր կաշվի վրա զգաց միայն 15 տարի հետո:

Մենք կյանքի փորձով աշխարհում առաջին անգամ գլխավոր հրամանատարություն-բանակ-դիվիզիա-բրիգադ-գունդ դասական մոդելից անցում էինք կատարել գլխավոր հրամանատարություն-կիրառող ուժեր մոդելին, որը ռազմագիտական լեզվով կարելի է անվանել կառավարվող ապակենրոնացում: Սա, ըստ էության, հինգերորդ սերնդի պատերազմների հիմնական տարրերից մեկն է, որը հետո կամրագրեն արևմտյան ռազմական տեսաբանները: Նման մոդելը առաջին հերթին շեշտակի բարձրացնում է զորքերի կառավարելիությունը, ինքնուրույնությունը և այլ բաղադրիչներ, որոնք հանգեցնում են զորքերի կիրառման արդյունավետությանը:

Աշխարհում քիչ երկրների է հաջողվել հարթավայրում ձեռնարկել հարձակողական գործողություններ՝ ի սկզբանե ունենալով հակառակորդից 2-3 անգամ ավելի քիչ ուժեր, երբեմն դասական պահանջներից էլ սակավ միջոցներ: Սակայն դրանցից ոչ մեկին չի հաջողվել ընդամենը 100-150 միավոր զրահատեխնիկայով, ընդհանուր ուժերով զիջելով հակառակորդին՝ մոտ 3000-անոց զորքով ընդամենը 4-4,5 ամսում ազատագրել մոտ 6000 կմ^2 տարածք: Զորաշարժերը իրականացվում էին մեծ արագությամբ, որը մարտի համար հնարավոր չէր համարվում, զրահատեխնիկան միշտ զինված էր նախատեսվածից սակավ մարտապաշարով, սակայն խնդիրները կատարում էին փայլուն: Գործողությունների ժամանակ պլանային ժամանակացույցերը քիչ էին խախտվում, սակայն եթե անգամ այդպիսիք լինում էին, եթե առաջանում էին շեղումներ, ապա հրամանատարների ճիշտ կողմնորոշման, իրավիճակի ճիշտ գնահատման շնորհիվ ամեն ինչ արագ շտկվում էր այնպես, որ հարձակման ընդհանուր մտահղացմանը հավատարիմ լինի:

[1] Տե՛ս Written by Victor O'Reilly for Congressman Jim Saxton, D21 Aug 22, 2003. p. 103-108.cochraneinst@adelphia.net; Формирование механизированных бригад “Страйкер” в сухопутных войск США. 20.08.2010. http://www.military-informant.com/index.php/army/523-stryker.html#.UclYxfmeMZk

Բանակի բարեփոխման գործընթացը

1994-2007 թթ. ժամանակահատվածը աչքի ընկավ բանակի համար կարևոր մի առանձնահատկությամբ. դաշտային բանակը այլ բնույթ էր ստանում՝ դառնալով զորանոցային, սակայն միաժամանակ մշտական մարտական խնդիր կատարող: Հսկայական աշխատանք կատարվեց մարտական պատրաստության ասպարեզում: Մարտունակության բարձրացման, հրամանատարական բոլոր օղակների պատրաստության, նյութատեխնիկական հզոր բազայի ստեղծման, զորամասերի կազմավորման և կարգապահության ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքները ուղղակի հսկայական էին:

Զորամասերում կառուցվում էին հրաձգարաններ, տանկային ուղեգծեր, հրազենահրետանային կամ լազերային հրաձգարաններ, մարտավարական ուսուցման դաշտեր և այլն: Զինված ուժերի զարգացումը ընթանում էր բնականոն փուլերով, ամեն մի նոր տարում բանակը ստանում էր նոր զենք, նոր տեխնիկական հնարավորություններ և 2000 թվականների սկզբներից անցավ ավտոմատ կառավարման համակարգերի[1]: Դա հնարավորություն է տալիս կենտրոնական ապարատի հրամանները և որոշումները զորքերին հասցնել էլեկտրոնային եղանակով և արագ:

Ռազմակրթական համակարգը

1994 թ. մարտի 27-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց 1994թ. երկրորդ եռամսյակում պահեստազորի սպաների ու զինապարտների վարժական հավաքների կազմակերպման մասին[2]: Ապրիլի 9-ին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանն ու պետնախարար Վազգեն Սարգսյանը սպայական վկայականներ հանձնեցին գնդապետ Միքայել Տիտանյանի ղեկավարած դասընթացների առաջին շրջանավարտներին[3]:

Ներկայումս հայկական բանակի համար սպաների կրթման հիմնական կառույցը Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն է: Հայաստանի Հանրապետությունում սպայական կադրեր պատրաստելու հրամայականով 1994 թ. հունիսի 24-ին ՀՀ կառավարության թիվ 279 որոշմամբ[4], ապա պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի հունիսի 25-ի հրամանով հիմնադրվեց «բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարան»: ՀՀ կառավարության 1998 թ. հունվարի 16-ի թիվ 24 որոշմամբ ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական ուսումնարանը վերակազմավորվեց ռազմական ինստիտուտի՝ շարունակելով ուսուցումը 8 մասնագիտությունների գծով[5]:

Հատկապես 2003 թ. սկսած, ինտեգրվելով պետական ԲՈՒՀ-երի համակարգում, ռազմական ինստիտուտը դարձավ հանրապետության պետական ԲՈՒՀ-երի լիիրավ

---

[1] Տե՛ս Բանակն ամեն մասնագետի կարիք էլ ունի՞, Փետրվար 2004: http://www.aravot.am/2004/02/21/317011/

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 171, գործ 124. թերթ 1-2:

[3] ՀՀ ՊՆ գործավարություն թղթապանակներ 1994, գործ 15-589:

[4] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 171, գործ 264. թերթ 1-2:

[5] Նույնը, ցուցակ 188, գործ 24. թերթ 1:

անդամ և փոխադարձ համագործակցություն ու անշահախնդիր օգնություն ակնկալելու լայն հնարավորություններ ստացավ[1]:

Ռազմական կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով 2011-ին Հայաստանի Հանրապետության կառավարության «Ռազմական կրթության հայեցակարգը» ներկայացնում է ռազմական կրթության նոր քաղաքականություն[2]: Այն համահունչ է պետական կրթական համակարգի ծրագրերին: Ռազմական կրթության արդիականացված քաղաքականությունը կրթություն է նախատեսում ոչ միայն սպայական, այլև արհեստավարժ սերժանտական կազմի համար:

Ռազմական կրթություն և լեյտենանտի սկզբնական սպայական կոչում ստանալուց զատ ՌԻ շրջանավարտները նաև միջազգային բարձրագույն եռաստիճան համակարգի առաջին աստիճանի՝ բակալավրի որակավորում են ստանում՝ հնարավորություն ունենալով պահեստազոր անցնելուց հետո աշխատել ինժեների մասնագիտությամբ: Ներկայումս ընթանում են լայնամասշտաբ աշխատանքներ ՌԻ-ի հիման վրա ռազմական համազորային ակադեմիա ստեղծելու ուղղությամբ: 2013 թ. արդեն բացվեցին այդ աշխատանքի նախնական փուլ հանդիսացող հրամանատարաշտաբային դասընթացները, որտեղ ընդունվեցին գումարտակի և գնդի հրամանատարական օղակի սպաներ: 2014-2015 թթ. գործելու է արդեն ռազմական ակադեմիան, որտեղ ընդունվելու են նաև ավելի շատ ունկընդիրներ[3]:

Իր ստեղծման օրվանից ինստիտուտը պատրաստել է ավելի քան 4000 սպա[4]:

ՀՀ ՊՆ միջնորդությամբ 1994 թ. սեպտեմբերի 20-ին կառավարության թիվ 447 որոշմամբ ռազմաավիացիոն կենտրոնին տրվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության կարգավիճակ՝ Ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարան անվանումով (ուսման տևողությունը 3 տարի)[5]:

25.05.2001 թ. հրամանով ուսումնարանը վերակազմավորվեց ՊՆ բարձրագույն ուսումնական հաստատության՝ ՀՀ ՊՆ ռազմաավիացիոն ինստիտուտի, ուսուցումը ստացիոնար համակարգում՝ 4 տարի[6]: 2002 թ. ինստիտուտը սկսեց կազմակերպել նաև ՀՀ ԶՈՒ սպա-կապավորների, իսկ 2005 թ.՝ նաև հակաօդային պաշտպանության մասնագիտություններով սպաներ: Սրանք այն մասնագիտություններն էին, որոնք ժամանակին գործում էին Վ. Սարգսյանի անվան ՌԻ-ում[7]:

Արտերկրում սպայական կադրեր պատարստվում են 1993 թվականից, երբ ՀՀ-ի և մի շարք երկրների միջև ստորագրվեցին համագործակցության համապատասխան պայմանագրեր: Համազորային հիմնական մասնագիտություններով սպաներ պատրաստվում են ՌԴ-ում: 1993 թվականից մինչև օրս ՌԴ-ում սովորել են ավելի քան

---

[1] Տե՛ս Կարապետյան Մ. Ն., Մելքոնյան Ա. Ս., ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում իրականացվող բարեփոխումների ընթացքը ռազմակրթական զարգացումների համատեքստում: Հայկական բանակ, 3 (73). 2012, էջ 34-40:

[2] Տե՛ս Օհանյան Ս. Մ., Ռազմական կրթության համակարգի զարգացումը որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն: Հայկական բանակ, 3 (73). 2012, էջ 9-19:

[3] ՀՀ ՊՆ Օհանյան Ս., ելույթ Վ. Սարգսյանի անվան ՌԻ-ում կայացած կոլեգիայի ժամանակ:

[4] ՀՀ ՊՆ կադրերի ընդհանուր տվյալներ:

[5] Տե՛ս Բալայան Դ. Կ., Ալեքսանյան Դ. Մ., ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ռազմական կրթության զարգացման հարցի շուրջ, Հայկական բանակ, 3 (73). 2012, էջ 42-46:

[6] Տե՛ս ՀՀ ՊՆ հրաման 0167, Երևան; Բալայան Դ. Կ., Ալեքսանյան Դ. Մ., էջ 42-46:

[7] Տե՛ս Բալայան Դ. Կ., Ալեքսանյան Դ. Մ., էջ 42-46:

800[1] հայ ուսանողներ և ներկայումս սովորում են ևս մոտ 200-ը[2]: ՌԴ-ի համազորային, մասնագիտական ակադեմիաներում և ԳԾ ակադեմիայում ուսանել են ավելի քան 700-800 սպաներ՝ հիմնականում գումարտակ, գունդ օղակի, ինչպես նաև գեներալական հաստիքներ, իսկ այս պահին սովորում է ևս մի քանի տասնյակ[3]: Կարճաժամկետ տարատեսակ դասընթացներին և մասնագիտական կուրսերին մասնակցել են ավելի քան 1000 սպաներ, հիմնականում գնդի օղակի, դասախոսների և վարչական կազմից: ՌԴ-ից հետո մյուս երկիրը, որտեղ մեծ քանակությամբ հայ սպաներ են սովորում, Հունաստանն է: 1993 թ. Հունաստանի համազորային ակադեմիայում և բժշկական բուհերում սովորել են շուրջ 100 սպաներ և ներկայումս էլ սովորում են[4]: Արևմտյան երկրներում սովորել և սովորում են Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: ՌԴ-ից հետո նման դասընթացներ ամենամեծ քանակով անցել են ԱՄՆ-ում, մոտ երկու հարյուր սպա, որոնցից սակայն մի քանիսն են ավարտել արտասահմանցիների համար ամենաբարձրակարգ «Պատերազմի քոլեջ» դասընթացը, որը հավասար է ՌԴ ԳԾ ակադեմիային: Մի քանի տասնյակ սպաներ նման դասընթացների են մասնակցել Չինաստանում: Մոտ 100 սպա նման դասընթացների է մասնակցել ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում[5]:

Բանակի համագործակցությունը միջազգային կառույցների հետ

Այսօր աշխարհը գլոբալ է ու պետությունները փոխկապակցված են: Մեկուսի ապրելու բոլոր ճանապարհները փակուղի են տանում, իսկ ռազմական գործում դա ավելի հստակ է դրսևորվում, քանի որ ռազմական ոլորտի նորարարությունները, գիտությունը, տեխնիկան զարգանում են ոչ շատ մեծ չափերով : Դրանց հիմնական կրողները և զարգացնողները մի քանի ուժային կենտրոններն են, որոնց հետ փոխհամագործակցությունը շահավետ է ու կարևոր[6]: Դեռ պատերազմի ժամանակ ՀՀ ԶՈՒ-ի ղեկավարությունը սերտ կապեր էր պահպանում ԱՊՀ պետությունների և մասնավորապես ՌԴ-ի հետ, իսկ արևմտյան երկրները նման շփումների հետաքրքրություն էին ներկայացնում:

Միջազգային ռազմական համագործակցության ասպարեզում 1992-1993 թթ. եղան առաջին շփումները ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ: Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակում ռազմական բնագավառում ընթացող գործընթացները սկիզբ են առել դեռևս 1992 թ.՝ կազմակերպության ստեղծման պահից:

2009 թ. ՀՀ զինված ուժերում կազմավորվեց միացյալ զորախմբի հրամանատարության շտաբ՝ ՌԴ 102-րդ ռազմաբազայի կառավարման մարմինների հետ համագործակցելու նպատակով:

---

[1] Գաղտնիության պատճառով ստույգ թիվը չեն նշում:

[2] Տե՛ս ՀՀ ՊՆ կադրերի վարչության ռազմակրթական բաժնի գործավարություն. գաղտնի թղթապանակներ:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] ՀՀ ՊՆ կադրերի վարչության ռազմակրթական բաժնի գործավարություն. Արտաքին կապերի գաղտնի թղթապանակներ:

[6] Այս մասին տե՛ս նաև Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, էջ 199-204:

Պաշտպանության ոլորտում հայ-ռուսական երկկողմ համագործակցության հանգուցային բնագավառներից մեկը ռազմատեխնիկական համագործակցությունն է: Ամեն տարի ՌԴ-ից հսկայական ծավալի զենք և զինամթերք է ձեռք բերվում և ներկրվում: Միայն 2011-2013 թթ. ներկրված զենք-զինամթերքի ծավալները գերազանցում են նախորդ 20 տարիների ձեռքբերածը՝ դրանց կազմում են մի քանի հարյուր միավոր զրահատեխնիկա, տանկեր, նույնքան հրետանային միջոցներ, ՀՕՊ միջոցներ, հսկայական քանակությամբ փոքր զենքեր և զինամթերք[1]:

ԱՊՀ շրջանակներում, իհարկե, կան նաև առանձին հարաբերություններ պետությունների հետ: Համագործակցություն Բելառուսի, Ուկրաինայի և Ղազախստանի հետ: Վերջին տարիները հագեցած էին հայ-բելառուսական բարձրաստիճան պատվիրակությունների փոխայցելություններով: Երկու երկրների միջև երկկողմ պաշտպանական համագործակցության հիմնական ոլորտներն են ռազմաարդյունաբերությունը և ռազմական կրթությունը: Վերջին տարիներին նաև Բելառուսից ներկրվել են որոշակի քանակության ռազմական տեխնիկա և սպառազինություն[2]:

Եվրոպական զարգացման ուղեգծի համատեքստում Հայաստանի անվտանգության ապահովման համակարգում կարևոր դերակատարություն ունեն ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները:

Մոտ 1000 խաղաղապահներ պատվով են ծառայել տարբեր առաքելությունների շրջանակներում: Մեր խաղաղապահները բազում անգամ պարգևատրվել են օտարերկրյա պետությունների մեդալներով և արժանացել են տարբեր խրախուսանքների[3]: Խաղաղապահները ցանկացած խնդրի կատարման և զորավարժությունների ժամանակ մշտապես արժանանում են բարձր գնահատականների[4]:

ՀՀ ՊՆ համար մյուս կարևորագույն ուղղությունը հարաբերություններն են ԱՄՆ-ի հետ: Սկզբնավորվելով դեռևս 1994 թ., 2001 թվականից ի վեր՝ ամենամյա երկկողմ համագործակցության պլանների իրականացման միջոցով ձեռք բերեցին համակարգված և նպատակային բնույթ:

Սկսած 2002-ից Ամերիկյան կողմը «Արտաքին ռազմական ֆինանսավորում» (ՖՄՖ) ծրագրով ՀՀ զինված ուժերին ցուցաբերում է զգալի նյութատեխնիկական օժանդակություն, որի շնորհիվ 2002 թ. հիմնադրվեց ՀՀ ՊՆ մարդասիրական ականազերծման կենտրոնը, 2007 թ. ՀՀ ՊՆ-ին տրամադրվեց «ԵՄԵԴՍ» շարժական դաշտային հոսպիտալը: Իրականացվում են նաև բազում այլ նախագծեր:

Պաշտպանության նախարարությունն ակտիվ համագործակցություն է իրականացնում նաև Չինաստանի ռազմական գերատեսչության հետ՝ հատկապես կրթության բնագավառում, որի շրջանակներում ՀՀ ԶՈՒ զինծառայողները վերապատրաստվում են ՉԺՀ ռազմաուսումնական հաստատություններում: Նշանակալի դեր է խաղում նաև նյութատեխնիկական համագործակցությունը, որի միջոցով ՀՀ Պաշտպանության նախարարությունը համալրվում է ժամանակակից փոխադրամիջոցներով, համակարգչային տեխնիկայով և բժշկական սարքավորումներով:

---

[1] ՀՀ ՊՆ սպառազինության պլանների քննարկման գաղտնի փաստաթղթեր և միջպետական ռազմատեխնիկական համագործակցության հանձնաժողովի նիստերի արձանագրություններ:

[2] Տե՛ս Գեներալ-մայոր Չիլինգարյան Մ. զեկույցը սպառազինության նվիրված կոլեգիային:

[3] ՀՀ ՊՆ Կադրերի և ԱՀՏԱ քաղվածք:

[4] Տե՛ս Галущак И.. Высокая оценка миритворцев. Красная звезда. 7 августа. 2013г. стр. 5.

Հայաստանը ռազմական ոլորտում երկկողմ հարաբերություններ է զարգացնում տարածաշրջանային հարևան և ավանդական բարեկամ երկրների՝ Իրանի և Վրաստանի հետ:

Եզրակացություններ

Հայոց բանակը հրադադարից հետո հայտնվեց բոլորովին այլ իրավիճակում, երբ բանակը սարերից իջավ զորանոց: Հայոց բանակի կազմավորման և ամրապնդման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել չորս հիմնական փուլերի.

ա. 1992-1994 թթ. կազմավորումից մինչև մարտական գործողությունների ավարտը,

բ. 1994-1998 թթ. հրադադարի հաստատումից մինչև բանակի զորանոցային իրավիճակի բերումը, նոր զորամասերի կազմակերպչական հիմնական գործողությունների ավարտը,

գ. 1998-2007 թթ. բանակի ինստիտուցիոնալ կայացումը,

դ. 2007-մինչև այժմ բանակի հիմնական բարեփոխումների և կերպարանափոխման փուլը:

Հայոց բանակի զարգացման համար զորատեսակների առումով կան մի քանի խնդիրներ, որոնք ծախսատար են՝ միջնաժամկետ և երկարաժամկետ լուծվելու հնարավորություններով, որոնք մեծապես կբարձրացնեն բանակի մարտունակությունը և հնարավորությունները: Խոսքը ընդհանուր ՕՀՄ-ների մասին է և որպես դրանց առանձին ու հիմնական ուղղություն՝ օդուժի: Մեզ համար հատկապես առարկայական նշանակություն ունեն հեռահար հրթիռային միջոցները՝ ՀԿՌՀ-ները, մարտավարական և օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրներ: Նշված ոլորտում ավելի առարկայական է օդուժ և ՀՕՊ զորքերի զարգացումը, ինչը նախ և առաջ պետք է ընթանա միասին:

Դրանք իրենց բովանդակությամբ, տարողությամբ, կատարման ծավալով մի քանի տարվա ընթացքում կատարվող կամ մշտապես կատարվելիք աշխատանքներ են: Բանակը կատարելագործվում է ամեն օր և ամեն օր նոր առաջարկներ ու գաղափարներ են քննարկվում[1]: Ինչպես արդեն նշեցինք, բանակը ստեղծվեց որպես ազգային պայքարի ոգու արտահայտություն, դարձավ 20-րդ դարի բանակ: 2007-2008 թթ. հայոց բանակը գնում է դեպի 21-րդ դարի չափանիշները: Այս փուլը առանձնահատուկ է լինելու նրանով, որ զարգացվելու է սեփական ռազմակրթական համակարգ և ռազմաարդյունաբերական համալիր, որ 21-րդ դարում բանակների կայացման կարևորագույն հիմքերից է: Առանց սեփական ռազմակրթական համակարգի բանակը ապագա չունի:

Ռազմական ոլորտի զարգացման, մատակարարման և այլ հարցերի հիմնական մասը ներկայումս հիմնականում լուծվում են ՌԴ-ի հետ: Ռազմական համագործակ-

[1] Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը: Խաչատուրով Յու. Գ., Պաշտպանությանը պետության և նրա Զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր, էջ 8-19; Քոթանջյան Հ. Ս., Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով, էջ 25-33;. Տեր-Մաթևոսյան Վ. Հ, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության վերանայման հեռանկարները, էջ 73-81; Հովհաննիսյան Ա., ՀՀ ԶՈՒ-երի մարտավարության խնդիրների շուրջ: Գլոբուս ազգային անվտանգություն, էջ 45-50:

ցությունն այլ երկրների հետ հիմնականում կրում է ավելի սահմանափակ բնույթ, ինչը այնքան էլ գոհացուցիչ չէ: Մասնավորապես անհրաժեշտ է վերանայել տեխնիկական մատակարարման հարցերը, քանի որ կադրերի պատրաստման հարցը քիչ թե շատ լուծվում է արևմտյան երկրների հետ համագործակցության տարբեր ձևաչափերով:

Միակողմանի ռազմական համագործակցությունն ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Սակայն մեր խորին համոզմամբ ռազմական միակողմանի համագործակցության բացասական կողմերն առավել շատ են: Ցանկալի է, որ փոքր պետություններն իրենց ռազմական կարևորագույն հարցերի լուծումը կապեն ոչ թե մեկ, այլ մի քանի պետությունների հետ[1]:

Մեր երիտասարդ բանակի համար անհրաժեշտ են այնպիսի կադրեր, որոնք պետք է տեղեկացված լինեն աշխարհի ամենատարբեր բանակների մարտավարությունից, ռազմական տեխնիկայից, ղեկավարման ու կառավարման համակարգերից, ավանդույթներից: Թվարկվածը հարկավոր է հիմնարար կերպով ուսումնասիրել, վերլուծել և թեկուզ վերափոխված տարբերակներով կիրառել հայկական բանակում՝ բանակն առավել արդիականացնելու և հզորացնելու համար:

Խնդիրը նաև առաջնային է այն պատճառով, որ ռուսական սպառազինությունը և ռազմական տեխնիկան ներկայումս անհուսալիորեն հնանում են, ինչի գիտակցումը կա նաև ՌԴ-ում: Ներկայումս ռուսական անգամ որպես ամենաժամանակակից ներկայացվող զինատեսակները հիմնականում խորհրդային ժամանակների նմուշներ են, լավագույն դեպքում՝ կատարելագործումներ: Նորագույն զինատեսակների և զենքերի ստեղծումը և հատկապես արտադրությունը մեծ հարցականի տակ է: Քանդվում են երբեմնի հզոր ռազմական գիտակրթական և արտադրական համալիրները: Իհարկե, դեռ երկար ժամանակ ռուսական զենքերը կհանդիսանան աշխարհում ամենավաճառվողներից, սակայն դրանք հիմնականում, բացառությամբ որոշ նմուշների, կհամարվեն անցած պատերազմների գործիքներ: Մասնագիտական պատրաստման հարցում ևս ՌԴ-ը նորից դիմում է իր ավանդական ուսուցիչներին՝ գերմանացիներին[2]: Նշանակում է մենք ևս պետք է ուղղակի աշխատենք այլ երկրների հետ: Այսօր արդեն ՌԴ-ը որոշ նմուշներ ձեռք է բերում արտասահմանում[3]: Մեզ ևս ոչ հեռու ապագայում անհրաժեշտ են գերժամանակակից զենքեր, որոնցից շատերն արդեն ինքնաբերաբար ռուսական չեն կարող լինել:

Ահա նաև այս պատճառով հարկավոր է, որ մենք ևս մեր ռազմական համագործակցությունը մեծացնենք այլ երկրների հետ: Խնդիրը նախ զենքերի և զինատեսակների մատակարարմանն է վերաբերում:

---

[1] Պատմությանը հայտնի են բազում դեպքեր, երբ միակողմանի կապերը դժբախտությամբ են ավարտվել: Ամենավառ օրինակներից մեկը նորից կապված է Իսրայելի հետ: Պատմությանը լավ հայտնի է Ֆրանսիայի նախագահ Դը Գոլի սահմանափակումներից հետո Իսրայելի ծանր վիճակը, որը դժվարությամբ հաղթահարվեց, և դրանից ստացան համապատասխան դասեր: Իսրայելն այժմ իր հարցերը գերադասում է լուծել հնարավորինս ինքնուրույն՝ ռազմավարական համագործակցության համար միշտ թողնելով այլընտրանքային տարբերակներ: Самопомощь. "Вести", 3.01.2001. http://gazeta.rjews.net/mazin.shtml

[2] Побеждать нас научат немцы: http://nvo.ng.ru/news/2011-06-24/2_pobeda.html#.

[3] Что лучше – покупать вооружение за границей или оснащать Российскую армию отечественным вооружением?.http://topwar.ru/26677-chto-luchshe-pokupat-vooruzhenie-za-granicey-ili-osnaschat-rossiyskuyu-armiyu-otechestvennym-vooruzheniem.html. 13 апреля 2013.

Մեզ համար այս ոլորտում բացի ավանդական լիդերներից հատկապես հետաքրքիր է ռազմական համագործակցությունն այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան, Հնկաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան, Շվեդիան:

Ֆրանսիան ԱՄՆ-ից և ՌԴ-ից հետո միակ պետությունն է, որ ստեղծում է ռազմական, ցամաքային, ծովային և տիեզերական ցանկացած տեխնիկա, սպառազինություն ու սարքավորում: Այսինքն՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի հարցում Ֆրանսիայի հետ համագործակցությունն ամենաշահավետներից է: Մասնավորապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում ֆրանսիական կապի, հետախուզության, ղեկավարման և այլ սարքավորումները, որոնք տարբեր երկրներում անխափան կիրառվում են անգամ խորհրդային հրասայլերի, ԹՍ-ների և այլ մեքենաների վրա: Մեզ համար հետաքրքիր են մասնավորապես ֆրանսիական մարտական ԹՍ-ները և դրանց սպառազինությունը, որոնք լավագույններից են աշխարհում: Ֆրանսիական բանակն ունի ամենատարբեր տարածաշրջաններում մարտական գործողություններ վարելու հարուստ փորձ, որը գրեթե մշտապես շարունակվում է: Խաղաղարար առաքելությունների կազմակերպման լավագույն ավանդույթներից մեկը հենց ֆրանսիական բանակին է պատկանում: Մեզ համար որոշակի հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև ֆրանսիական «Օտարերկրյա լեգիոնի» կազմակերպման և մարտական կիրառման հետ կապված հարցերը, քանի որ մարտական գործողությունների դեպքում ՀՀ ԶՈՒ-ի կազմում անպատճառ մարտնչելու ցանկություն կհայտնեն զգալի թվով սփյուռքահայեր, ինչպես նաև, հնարավոր է, այլ ազգերի ներկայացուցիչներ: Միաժամանակ լեգիոնը կարող է հիմք դառնալ հեռավոր ապագայում ՀՀ բանակում օտարազգիներից ստեղծված վարձկան ստորաբաժանման թեկուզև սահմանափակ կիրառման համար:

Մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել ռազմական համագործակցությունը հատկապես Հնդկաստանի հետ: Այս պետությունն օր-օրի ավելի է մոտենում գերտերությունների վերին սանդղակին: Հնդկական ԶՈՒ-ի սպառազինման և ռազմաարդյունաբերական մակարդակը ներկայումս նախանձելի առաջընթաց ունի: Ստեղծվում են հնդկական նմուշի ինքնաձիգներ[1], հրասայլեր[2], տարատեսակ հրթիռներ, նավեր և անգամ կործանիչներ: Հնդկաստանը մի քանի տարի անց իր ավիակիր նավերի քանակով կարող է դառնալ երկրորդն աշխարհում[3]: Հարկավոր է այդ հնարավորությունները և Հնդկաստանի՝ օրեցօր աճող քաղաքական կշիռն օգտագործել ի նպաստ մեր անվտանգության ապահովման բարելավման: Մեզ համար հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ մեր ՌՕՈՒ-ի հետագա զարգացման համար Հնդկաստանը կարող է բացել հիանալի հնարավորություններ: Բանն այն է, որ հնդկական ՌՕՈՒ-ի սպառազինության մեջ են գտնվում չորրորդ սերնդի լավագույն կործանիչներից առնվազն երեքը՝ «Սու-30», «ՄիԳ-29», «Միրաժ-2000»: Մոտ ապագայում նրանք ձեռք կբերեն ֆրանսիական նոր կործանիչներ, որոնք իրենց

[1] INSAS (Indian National Small Arms System), http://weapon.at.ua/load/301-1-0-727

[2] Arjun, http://armor.kiev.ua/Tanks/Modern/India/

[3] ԱՄՆ-ից բացի, մեկից ավելի լիարժեք ավիակիր նավ չունի ոչ մի երկիր: Հնդկաստանը ներկայումս ունի մեկ, իհարկե, ոչ լիարժեք, սակայն աշխարհում եղածներին չզիջող ավիակիր նավ: Մոտ ապագայում կստանա երկուսը ևս, որոնք կունենան նաև չորրորդ սերնդի կործանիչներ:

հիանալի ցուցաբերեցին Լիբիայում: Ընդ որում, Հնդկաստանը ներկայումս արտադրում է մեզ այդքան հետաքրքրող «Սու-30»-ը, իսկ ապագայում նաև ֆրանսիական «Ռաֆալ» կործանիչներ: Ամերիկյան և եվրոպական երկրների ՌՕՈՒ-ի հետ անցկացված բարձր մակարդակի զորավարժությունները փաստում են, որ հնդկական օդաչուական դպրոցը լիովին կայացած է և լավ ավանդույթներ ունի: Հետաքրքրություն է ներկայացնում նաև հնդկական հրթիռաշինությունը, որը ևս մեծ արդյունքների է հասել մասնավորապես մեզ այնքան հետաքրքրող մարտավարական և օպերատիվ մարտավարական հրթիռների ոլորտում: Հնդկական «Փրիթվի III (ՍՍ-350)», «Ագնի 1» և այլ հրթիռները հայտնի են: Դրանք շատ բացառիկ նմուշներ են և իրենց հիմնական տվյալներով գերազանցում են համանման չինական, կորեական, իրանական և շատ այլ հրթիռների:

Հնդկական բանակը լեռնային պայմաններում մարտական գործողությունների վարման հիանալի փորձ ունի: 1999 թ. այսպես կոչված Կարգիլյան հիմնախնդրի ժամանակ հնդկական բանակը լավ փորձ ձեռք բերեց օդուժի, հրետանու և հատկապես հատուկ ստորաբաժանումների կիրառության գործում: Մեզ համար այդ փորձը հատկապես կարևոր է Տավուշում և Նախիջևանյան օպերատիվ ուղղության վրա հավանական լայնածավալ մարտական գործողությունների առումով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախիջևանում այսօր Ադրբեջանը ստեղծել է համազորային բանակ, ապա դա առանձնպես կարևոր է:

Բացի ավանդական հզոր համարվող ԱՄՆ-ից, Չինաստանից, Իսրայելից և եվրոպական մեծ պետություններից, այդ ցանկում են մասնավորապես օրեցօր իրենց փառավոր անցյալը վերաարժևորող Ճապոնիան, Հարավային Կորեան, Շվեդիան, ՀԱՀ-ը և այլն[1]: Ռազմականացումը և համաշխարհային ուժերի ծանրության կենտրոնը կամաց-կամաց նորից վերադառնում է Եվրասիա: Այս համատեքստում մեզ համար ևս կարևոր է այստեղ ստեղծել վստահելի կապեր և ունենալ մի քանի փոխլրացնող գործընկերներ:

Арцрун Ованнисян, Настоящий этап развития Вооруженных Сил Республики Армения, - Армянской армии уже 22 года. Она прошла довольно тяжелый путь становления и развития. Арцахское противостояние берет начало с Сумгаитских событий 1988 г. и продолжается до сих пор.

28 января 1992 года было основано Министерство обороны РА, а 24 февраля 1992 года Президиум Верховного Совета НКР принял постановление о создании сил самообороны НКР. Военный этап 1993 года, который ознаменовался блестящими военными действиями армянских вооруженных сил, сыграл крайне важную роль во всей армянской истории.

Начиная с 1994 года до сего дня, проделывается огромная работа, направленная на повышение боеспособности, готовности командных звеньев, на формирование и укрепление дисциплины в воинских формированиях, а так же на создание сильной логистической базы. В воинских частях строятся полигоны, танковые директрисы, лазерные или артиллерийские полигоны, поля тактической подготовки и т.п. Развитие ВС происходит размеренными этапами, с каждым новым годом армия получает новое оружие, новые технические возможности, а с 2000 года развитие перешло на автомати-

[1] MIlitary balance, ЗВО և այլ ամսագրերի ամենամյա հաշվետվություններ:

ческие режимы управления, что дает возможность доставлять войскам приказы и распоряжения центрального аппарата быстро и в электронном варианте. В 1994 был основан военый институт им. Вазгена Саргсяна, выпускниками которого на сегодняшний день являются более 4000 тысяч офицеров.

Важную роль в военном деле играет так же международное военное сотрудничество. Первые шаги в этой области были сделаны в 1992-1993 гг. с государствами-членами НАТО и Содружеством Независимых Государств (СНГ). В военной сфере, помимо вышеуказанных организаций, Армения развивает двусторонние отношения с рядом иных европейских стран, региональными соседями и традиционно дружественными государствами. Таким образом, если армия обладает собственными и сильными образовательными и ценностными системами, а так же собственным военно-промышленным комплексом, то такая армия самодостаточна и имеет великое будущее. Сегодня ВС РА идут по такому пути и создают армянскую армию 21-ого века.

Artsrun Hovhannisyan, Current Phase of Development of Armenian Armed Forces, - Armenian army is already 22 years old. It has undergone a very difficult way of formation and development. Artsakhian conflict, which started in 1988 with the events of Sumgait is going on till today.

On 28 January, 1992 Ministry of Defense of RA was established, on 24 February, 1992 The Presidency of Supreme Council of NKR admitted a decision about creating self-defense forces of NKR. The war period of 1993, where Armenian armed forces carried out excellent military operations, is very important for whole Armenian history.

Since 1994 huge work has been done for efficiency enhancement, preparation of all command chains, for creating powerful logistics basis, for formulating military units and strengthening the discipline. In military units there are shooting ranges, including artillery armor or laser ones, fields for tactical trainings, tank directrix, etc. The development of armed forces is going in natural phases: every new year army receives new weapons, new technical opportunities and from the beginnings of 2000s it has started to use automatic controlling system. It gives the opportunity to deliver the commands and decisions of central body to the army via electronic way and more quickly. Military University named after Vazgen Sargsyan was established in 1994 and since then it has given more than 4000 officers.

In military affairs international military cooperation is also highlighted. In this field the first steps were done in 1992-1993 with the member states of NATO, and with the Commonwealth of Independent States. Besides this in military sphere Armenia is developing bilateral relations with many other European, neighboring regional and traditionally friend states. Thus if army has educational and its own powerful system of values, military-industrial complex, then that kind of army is self-sufficient and has great future. Today the Military Forces of RA are on this way creating the 21st-century Armenian army.

Արծրուն Հովհաննիսյան - ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու: